



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԱԽՈՏՈՒ ԵՂԱՒ ԱԶԳ. Ռ. ԵՒ Ա. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՃԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հայկական մեր կրթական օճախները Յինգշաբթի, 3 Սեպտեմբերին վերաբացին իրենց դուռները, սկսելու համար ուսումնական 2009-2010 տարեշրջանը, հայ մանուկին ու պատանիին միտքն ու հոգին հարստացնելու համար գիտելիքով ու ազգային ժառանգութիւններով:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այցելեց Ազգ. Ռոգ Եւ Ալեք Փիլիպոս Վարժարանը, մասնակից եղաւ վերամուտի արարողութեան, իր օրինութիւնները բաշխելով աշակերտութեան, դաստիարակներու ու վարժարանի մեծ ընտանիքին: Ան յատկապես ողջունեց վարժարանի նոր տևորենը՝ Տիար Նազօ Արանեանը, ապա նաեւ վեր առաւ Հայ Դպրոցին տեղն ու դերը մեր նոր սերունդներուն կազմաւրման գործին մէջ: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արք. S. Վիգեն Ա. Քիոյ. Վասիլեան, հոգաբարձութեան անդամներ, ինչպես նաեւ Ազգ. Վարժարաններու կրթական համակարգի ներկայացուցիչներ ու մեծ թիւով ծնողներ:

Առաջնորդ Սրբազնին տևորինումով, մեր Եկեղեցիներու հոգեւոր հովիւները, իրենց կարգին, ներկայ եղան Եկեղեցւոյ կից կանգնող մեր վարժարաններու վերամուտի հանդիսութեանց ու փոխանցեցին Առաջնորդ Սրբազնին վերամուտի պատգամը: Հայ Դպրոցի սերունդակերտ ու հայակերտ հանգամանքին անդրադառնալու կողքին, Առաջնորդ Սրբազնը կանգ կ'առներ այս իրողութեան առջեւ, որ Ս. Աթոռոյս գահակալ Ա.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոս այս տարին նուիրած է Երիտասարդութեան ու այս մօտեցումով, Հայ Դպրոցը Եւս կարեւոր բաժին ունի մեր նոր սերունդներու Եւ Երիտասարդութեան մէջ ազգային հարստութեանց տիրութեան գիտակցութեան զարգացման մէջ (պատգամը կը տրուի առանձնաբար):

Նշենք, որ Ազգ. Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական վարժարանը (Սան Ֆրանսիսկո) շաբաթ մը առաջ բացած էր իր դուռները, իսկ Ազգ. Վահան Եւ Անուշ Շամլեան վարժարանը, մօտակայ լեռնային շրջաններուն մէջ ծագած աղետալի հրդեհներուն հետեւանքով, քանի մը օրով յետաձգած է վերամուտի հանդիսութիւնը:

## **PRELATE CONVEYS HIS BLESSINGS TO PRELACY SCHOOLS' STUDENTS AT THE START OF THE NEW SCHOOL YEAR**

Thursday, September 3<sup>rd</sup>, 2009, was the first day of the 2009-2010 academic year for Prelacy Schools.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was at Rose and Alex Pilibos School in Hollywood to participate in the opening ceremony. The Prelate conveyed his blessings to the students and administrators and welcomed the new principal Mr. Nazo Apanian. Also in attendance was the pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian, church and school board members, and parents.

Parish Pastors also attended the opening ceremonies of their respective schools and read the Prelate's back to school message. In his message the Prelate lauded the mission of the Armenian School and its role in cultivating the minds of our youth with our heritage and national treasures.

Let us note that Krouzian-Zekarian-Vasbouragan School began the new school year a week ago, while Vahan and Anoush Chamlian School in Glendale has postponed the start of the new school year due to the surrounding wildfires.